ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ ՀՀ քաղաքացիներ, Տաշիր համայնքի բնակիչներ,
Շնորհավորում եմ ձեզ Քաղաքացու օրվա կապակցությամբ:
Այս օրը խորհրդանշում է քաղաքացիական գիտակցության, իրավագիտակցության և հասարակական պատասխանատվության կարևորությունը: Այն առիթ է վերարժևորելու մեր դերը համայնքային և պետական կյանքում, ամրապնդելու փոխադարձ հարգանքի, համերաշխության և օրենքի գերակայության վրա հիմնված արժեքները:
Քաղաքացի լինելը նշանակում է ոչ միայն օգտվել սահմանված իրավունքներից, այլև կրել պատասխանատվություն համայնքի զարգացման, հանրային շահի պահպանման և ընդհանուր բարեկեցության ապահովման գործում: Համոզված եմ, որ ձեր ակտիվ մասնակցությունը և հետևողական աշխատանքը շարունակելու են նպաստել մեր համայնքի կայուն առաջընթացին:
Մաղթում եմ ձեզ առողջություն, խաղաղություն և արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ մեր համայնքի և պետության զարգացման: